

# Visa

## հեռախոսահամարով փոխանցումներ





Visa հեռախոսահամարով փոխանցումները Visa International համակարգի անդամ երկրների կողմից թողարկված քարտերի միջև փոխանցումներ կատարելու միջոց է: Փոխանցումներ հնարավոր է կատարել աշխարհի բոլոր այն երկրների բանկերի կողմից թողարկված քարտերին, որոնք չունեն Visa International-ի կողմից սահմանափակումներ և որոնց համար ակտիվացված է տվյալ ծառայությունը:

Ծառայությունը հնարավորություն է տալիս նաև ստանալ փոխանցումներ հեռախոսահամարով: Visa համակարգով փոխանցումների ստացման ծառայությունն ակտիվացված է Բանկի բոլոր ֆիզիկական անձ հաճախորդների համար: Ստացված փոխանցումները հաճախորդը կարող է ստանալ իր Visa կամ Mastercard տեսակի քարտերին: Մուտքագրվող քարտը նախապես ընտրվում է Բանկի կողմից, սակայն հնարավոր է փոփոխվել հաճախորդի կողմից acba digital բաժնի Պրոդուկտի կարգավորումներ բաժնում: Բանկի կողմից հաշվի ընտրությունը կատարվում է հետևյալ տրամաբանությամբ՝

- սկզբնապես ընտրվում է AMD արժույթով քարտը, վերջինիս բացակայության դեպքում՝ USD, իսկ վերջինիս բացակայության դեպքում էլ՝ EUR:
- եթե հաճախորդն ունի մեկից ավելի AMD արժույթով քարտեր (ևույն տրամաբանությամբ USD և EUR), համադրվում է միևնույն արժույթով համապատասխան քարտերի՝ Բանկում կանխիկացման տոկոսադրույքը: Որպես փոխանցման ստացման քարտ ընտրվում է Բանկում ամենափոքր կանխիկացման տոկոսադրույք ունեցող քարտը:
- եթե միևնույն արժույթով քարտերի՝ Բանկում կանխիկացման տոկոսադրույքները ևս համընկնում են, ապա որպես փոխանցման ստացման քարտ ընտրվում է ամենաուշ վերջին ամսաթիվ ունեցող քարտը:
- եթե միևնույն արժույթով քարտերի և կանխիկացման տոկոսադրույքով քարտերի վերջին ամսաթիվը ևս համընկնում է, ապա փոխանցումը ստացող քարտ ընտրվում է VISA, այնուհետև՝ MasterCard վճարային համակարգերի քարտերը (բացառությամբ Business տեսակի քարտերի):

# Visa հեռախոսահամարով փոխանցումներ



Visa հեռախոսահամարով փոխանցումներ կատարելու համար acba digital հավելվածում անհրաժեշտ է ընտրել «Փոխանցումներ» բաժինը, որտեղ կառաջարկվեն փոխանցման բոլոր տեսակները: Առաջարկվող տարբերակներից անհրաժեշտ է ընտրել «Քարտից քարտ փոխանցում» տեսակը

1


«Քարտից քարտ փոխանցում» սեղմելուց հետո կբացվի պատուհան, որտեղ կգտնեք Քարտից քարտ փոխանցումների բոլոր տարատեսակները: Visa հեռախոսահամարով փոխանցումների համար անհրաժեշտ է սեղմել Visa փոխանցումներ կոճակը

2



Բացվող պատուհանում անհրաժեշտ է ընտրել Հեռախոսահամարով տարբերակը


3





4

Նոր բացված էջում անհրաժեշտ է լրացնել ստացողի հեռախոսահամարը:




4

Որոնման դրական պատասխանի դեպքում տվյալները կցուցադրվեն ոչ ամբողջական տարբերակով:



Որոնման բացասական պատասխանի դեպքում համակարգը կառաջարկվի փոխանցումն իրականացնել քարտի համարով:

!!!



Ստացողի տվյալները հաստատելուց հետո բացվող էջում անհրաժեշտ է ընտրել ելքագրվող քարտը և մուտքագրել գումարի չափը: Փոխանցումը կիրականացվի ավտոմատ` թույլ ընթացքում:

5

# Պրոդուկտի կարգավորում



Visa հեռախոսահամարով փոխանցումներ ստանալու դեպքում acba digital համակարգի Պրոդուկտի կարգավորում բաժնից հնարավոր է փոփոխել մուտքագրվող քարտը, ապակտիվացնել կամ կրկին ակտիվացնել ծառայությունը:

